

դոնական լինելը¹: Տեղին նշենք, որ այդ իշխանը 627 թ. մահապատժի ենթարկուեց (մորթագերծ արուեց) Իրանի դէմ ծանր պատերազմում, ի վերջոյ, յաղթանակած բիւզանդացիների կողմից (628-ի գարնանն իր մայրաքաղաքում սպանուեց նաեւ խոսրով արքան), որից յետոյ, ամենայն հաւանականութեամբ, Վիրքը վերադարձուեց քաղկեդոնական դաւանանքին. ընդ սմին՝ 632 թ. Կարնոյ ժողովում Հերակլի պարտադրած միակամութեան-մոնոթելիզմի «փոխզիջումային» (բոլոր դէպքերում, իրօք՝ աւելի մեղմ) տարբերակով երկաբնակութեանը զիջումների գնաց նաեւ Հայոց կաթողիկոս Եզր Արահեզացին:

Այս քննութեան արդիւնքները թոյլ չեն տալիս համաձայնուել մասնագիտական գրականութեան մէջ վերջին տարիներին ձեռնարկուած նոր փորձերին (Բաբկէն Յարութլինեան եւ Ալբերտ Մուշեղեան)² փաստարկելու Ե. Երկրորդ կէսի պատմիչ Մովսէս Խորենացուն «Աշխարհացոյց»-ի հեղինակ անուանող ուշ ձեռագրական աւանդոյթի հաւաստիութիւնը³: Ճիշտ է, նշուած ուսումնասիրողների փորձերը վերաբերում են ոչ թէ մեզ հասած բնագրին (գոնէ Զ. Ե. վերջին յարող ծաւալուն նիւթով՝ Յառաջաբանը, Մեծ Հայքն իր շրջակայ երկրներով, Պարսից աշխարհը եւն), այլ վերջինիս համար իբրեւ նախագաղափար ծառայած ինչ-որ մի օրինակի (է դարում «լուրջ խմբագրութեան» ենթարկուած): Սակայն նման ենթադրական օրինակի բնութագրիչները (պարամետրերը), այդուհանդերձ, յստակօրէն չեն սահմանուած նշուած մասնագէտների հրատարակած աշխատանքներում³: Ի դէպ, մեր առ-

այժմ նախնական տպաւորութեամբ՝ գուցէ, փոխարէնը կարող է հեռանկարային լինել «Աշխարհացոյց»-ի հեղինակի փնտրտուքը «Պարսից ժողովի» այն երկու հայ մասնակիցների թւում (Կոմիտաս Ռշտունեաց եւ պիսկոպոս եւ Մատթէոս Ամատունեաց եւ պիսկոպոս), որոնց յիշում է Սեբիոսը⁴ (նման վարկածը ներկայումս գոնէ պիտի հերքի յայտնի երկերի ու դաւանական ժողովածոների բանասիրական նոր քննութիւնը, որին փորձելու ենք ձեռնարկել):

«Աշխարհացոյց»-ի համառօտ խմբագրութեան՝ չուրջ չորս տասնեակ գրչագրերում մեզ հասած բնագրի (արդէն՝ վերականգնելի հեղինակային սկզբնագրի մասին որոշակի հաւանականութեամբ պատկերացում տուող համեմատական տարբերակով) համադրական ընթերցումը ցոյց է տալիս, որ համառօտող խմբագիրն ուղղակի իր առջեւ չի դրել լուրջ սրբագրման կամ ծրագրային գաղափարախօսական խնդիրներ լուծելու նպատակներ: Կատարուել են զուտ կրճատումներ ու պարզեցումներ, որոնք, բնականաբար, երբեմն յանգեցրել են բովանդակութեան յայտնի խեղաթիւրումների, սակայն՝ ամենեւին ո՛չ նպատակամղուած (օր.՝ Իրանահայրի նկարագրութեան հատուածում, ուր համառօտը, իւրօրինակ ձեւով «խուսափելով կրկնութիւնից», չի պահել «Աշխարհ Պարսից» հատուածը, իսկ նրա չորս մասերի նիւթը լրիւ

1 Տե՛ս Антиох Стратиг, Пленение Иерусалима персами в 614 г., Груз. текст исследовал, перевел, издал ... Н. Марр, СПб., 1909, էջ 60:

2 Տե՛ս Բ. Յ. Յարութլինեան, Մեծ Հայքի վարչաքաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 2001; Ա. Վ. Մուշեղեան, Մովսէս Խորենացու դարը, Եր., 2007:

3 Բնականաբար, «Աշխարհացոյց»-ը մեծապէս արտացոլում է օգտագործուած գլխաւոր աղբիւրնե-

րի՝ Պտղոմէոսի եւ Պապայոս Աղէքսանդրացու երկերի՝ Բ եւ Դ դարերին վերաբերող միջոց (որին է դ. Ռեդիակն անդադրել է այլ աղբիւրներից քաղած իր ոչ պակաս պատկառելի գիտելիքը): Եթէ ենթադրենք այդ երկերի արդէն թարգմանում լինելը Ե-Զ դդ., ապա ասումսին պիտի յանդիմանա մեզ գտնուած դարերի «վաղ» միջոցը: Սակայն վերջինս, ինչպէս եւ որեւէ այլ վաղ աղբիւրագիտական միջոց, չպետք է մեզ շտապողական ժամանակագրական լուծումներ պարտադրի:

4 Վերջինիս բնագիրն է. «Դիպեցան անդ արք երկու եպիսկոպոսք յաշխարհէն Հայոց, արք հաւատարիմք, զորս վասն բռնութեան աշխարհին Էին արձակեալ, զի ծանուցեն թագաւորին՝ Կուսիտաս Մամիկոնէից եպիսկոպոս եւ Մատթէոս Ամատունեաց» (Սեբէոսի եպիսկոպոսի Պատմութիւն, էջ 124; Պատմութիւն Սեբէոսի, էջ 170):